ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-905-03.12.2015--010/0*) վերաբերյալ:

Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը պետք է պարունակի ոչ միայն բնակության, այլ նաև հաշվառման վայրի մասին տեղեկատվություն, որպեսզի այն համարվի անձը հաստատող լիարժեք փաստաթուղթ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1. 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետի՝ անձնագիր է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթը, որը

նախատեսված է Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար.

2) 3-րդ կետի՝ տվյալների էլեկտրոնային պահոցն անձնագրի տեխնիկական կառուցվածքային մասն է, որը ներառում է քաղաքացու՝ օրենքով նախատեսված տվյալները, այդ թվում՝ կենսաչափական տվյալները: Միաժամանակ, կենսաչափական տվյալներ են համարվում օրենքով սահմանված կարգով հավաքվող, պահպանվող և օգտագործվող անձնական տվյալները, որոնք բնութագրում են քաղաքացու ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հնարավորություն են տալիս քաղաքացուն նույնականացնելու (լուսանկար, ստորագրություն, աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմներ, սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմներ):

2. 5-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձնագիրը ներառում է տեխնիկական մաս՝ տվյալների էլեկտրոնային պահոց:

Այս նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, բացի օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տվյալներից, ներառում է նաև տվյալների էլեկտրոնային պահոցը, որն իր մեջ պարունակում է նաև անձի վերաբերյալ կենսաչափական տվյալները: Իսկ նման տվյալների, մասնավորապես՝ լուսանկարի, ստորագրության, աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմների ներառման հանգամանքը, լիովին բավարար է անձի ինքնությունը հաստատելու և անձին նույնականացնելու համար:

Հարկ է նշել նաև, որ անձի հաշվառման հասցեն ամենարագ փոփոխվող անհատական տվյալն է և շատ դեպքերում անձնագրում նշված և բնակչության պետական ռեգիստրում առկա հասցեները միմյանց չեն համապատասխանում: Հասցեի հաճախակի փոփոխման դեպքում քաղաքացին հարկադրված է լինելու փոխելու անձնագիրը («Հայաստանի Հանրապետության քա-

ղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն)՝ կրելով լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Բացի դրանից, անձնագրում հասցեն նշվում է հայերենով, հետևաբար այդ տվյալը կարող է օգտագործվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Մինչ Հայաստանի Հանրապետությունում բիոմետրիկ համակարգի գործարկելն ուսումնասիրվել է միջազգային փորձը, անձնագրի նմուշն անցել է միջազգային փորձաքննություն՝ ICAO-ի ստանդարտներին համապատասխանության տեսանկյունից: Եվրոպական երկրներում անձի ինքնությունը հաստատող ճամփորդական փաստաթղթերը հաշվառման հասցեի վերաբերյալ նշում չեն պարունակում:

Նախագծի հիմնավորումից չի բխում օրենքում առաջարկվող փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը, դրանում բացակայում են վիճակագրական տվյալները, համապատասխան վերլուծությունները, միջազգային փորձը և այլն: Այդ առումով նշված տեղեկությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս լիարժեք գնահատելու ներկայացված առաջարկության հիմնավորվածությունը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծով առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը բացակայում է և դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Վարդան Եղիազարյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է ՀՀ քաղաքացիների անձնագրերում ներառել նաև տեղեկատվություն հաշվառման վայրի վերաբերյալ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերագրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է նախատեսվում է ՀՀ քաղաքացիների անձնագրերում ներառել նաև տեղեկատվություն հաշվառման վայրի վերաբերյալ,* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ***ազդեցություն չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ոնի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ քաղաքացու անձնագրում նշել նաև նրա հաշվառման վայրը:

Ելնելով վերոգրյալից՝ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-905-03.12.2015--010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011թվականի նոյեմբերի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրիմասին օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6)-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

« 6) բնակության եւ հաշվառման վայրը»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ » ԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրում հաշվառման վայրը նշելու հանգամանքով: Քաղաքացու անձնագիրը պետք է պարունակի ոչ միայն բնակության, այլ նաեւ հաշվառման վայրի մասին տեղեկատվություն, որպեսզի համարվի լիարժեք անձը հաստատող փաստաթուղթ: